

Բ Ա Ն Ա Ս Ի Ր

ԼԱՆՈՒՅ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ

Ը ՏԱՐԻ 1906	Տարեկան՝ 15 ֆր. = 6 ռբլ. = 3 դրամ :	ՊՐԱԿ Դ N° 4
----------------	--	----------------

ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՀԱՐՍՏԱՑՆՈՂ

ԵՐԿՈՒ ԿԱՐԵՒՈՐ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեր աղքատիկ գրականութեան զարգացման եւ հարստացման նըպաստող ո՛րեւ է գործ իր առանձին կարեւորութիւնն ունի մեզ՝ Հայերու համար. իսկ երբ այն աշխատասիրութիւնը բազմաթիւրան երկունքի եւ երկար տարիներու աքնութեանց արդիւնք է. այն մամանակ կրնանք մեծ բաներ ակնկալել անոնցմէ եւ իրաւամբ կերեւակայենք թէ ի՛նչ մեծ օգուտներ կրնան տալ անոնք հայ բանասիրութեան. Այս կարգէն են ծանօթ բառագիր իշխան Գուրառն Լուսինեանի հայերէնէ ֆրանսերէն բառարանն եւ հայ բառագէտ Անդրեանիկ-Խանէսթօւի համեմատական բառարանը. որոնց ձեռագիրներն՝ իրենց հեղինակներուն կողմէ յանձնուած են ինձ. առգերս գրողիս, որպէս զի իրենց մեռնիկէն վերջը կարգի գընհիմ եւ հրատարակեմ. Այսօր այս երկու հեղինակներն ալ մեռած են. եւ ես բարոյական պարտականութիւն ունիմ երկուքին ձեռագիրներն ալ կոկելու. պէտք եղած վերջնական յարգարութիւնը տալու եւ հրատարակելու. քանի որ ա՛յս նպատակին համար միայն յանձնուած են ինձ այդ ձեռագիրները:

Գուլիստոն Լուսինեանի բառարանին համար երկու քառուղ ըսեմ, որ այս բառարանը պիտի կազմէ իր ֆրանսերէնէ հայերէն երկհատոր պատկերադարձ բառարանին հայերէնէ ֆրանսերէն մասը, մի եւ նոյն ընդարձակութեամբ ինչպէս է իր ֆրանսահայ բառարանը, այսինքն 3—4 անգամ աւելի ընդարձակ քան 1861—ին իր արդէն հրատարակած հայերէն-ֆրանսերէն բառարանը։ Այս բառարանին արձոյթ ձեռագիրներն իմ յուշմ են այսօր, եւ քիչ ժամանակէն պիտի ձեռնարկեմ հրատարակութեան, եթէ պարագաները նպաստեն։

Գալով Անդրոնիկ Իօանէսքուի աշխատասիրութեան՝ երեսուն տարինեքու չարաչար աշխատութեան պատուէն է այն, որ հեղինակին համար փայփայանքի միակ առարկան եղած է միշտ եւ ապրած՝ մի միայն իր կարեւոր երկասիրութեան հրատարակումը տեսնելու յուսով։ Բայց աւագ, ծերունի հասակը, կաթուածային հիւանդութիւնը, բարոյական հոգերն որոնց ենթակայ եղած էր իր պարտապաններուն երեսէն, մէկ հարուածով տարին իջուցին գերեզման։ Խեղճ բարեկամ, գոնէ բաց աչքով անգամ մը տեսնէի՝ր քու երկարամեայ աշխատութեանդ երախայրիքը, եւ անկէ ետք իջնէի գերեզման գոհ սրտով։

Մեծ յոյս ունիմ սակայն, որ քու այնչափ գուրգուրած եւ փայփայած գործդ, — որուն տարիներէ ի վեր աշխատակից եւ խորհրդակից ընտրած էիր զիս, — մեռեալ տառ չպիտի մնայ եւ օր մը լոյս աշխարհ պիտի գայ յօգուտ հայ դպրութեան եւ քու պանծալի յիշատակդ պիտի յաւերժանայ։

Առիթ պիտի ունենամ այս խնդրին վրայ վերադառնալու։

Կ. Յ. ԲԱՍՄԱՋԵԱՆ